

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի, Լուսնային համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան միջոցով:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ», կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1891 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն զինքով և նոյն պրոդրամայով: Մենք կը ստանանք սեփական շնորհակալութիւններ: Մշակի տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսականը 6 ռուբլի, Գրվել «Մշակին» կարելի է ԽՄԲԱԳՐԱՍՏԱՆԸ (Բարձրագոյն և Բարձրագոյն փողոցներէն անկիւնում, Թատարական տանը): Կարողութեամբ ուրիշ քաղաքներէն «Մշակին» գրվելու համար պէտք է գրուի հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

Յայտարարութիւններ ընդունուում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով: Բառերը վճարուում է 2 կոպեկ:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մտեցող ընտրութիւնները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Պարսկաստանի առեօրի խնդիրը. Կ. Պոլսի յուսաց պատրիարքարանի գործը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՇՆՈՒԱԳՐԱՍՏԱՆԸ.—ԲՈՐՍԱ.—ՏԵՂԵՎԱՆՈՅՑ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Լազարեան ձեմարանի եօթնամասուն և հինգամասուն:

ՄՈՏԵՑՈՂ ԸՆԴՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շուտով լինելու են Թիֆլիսի քաղաքային դռնային ընտրութիւնները և այդ ընտրութիւնները աչքի առջև ունենալով, կուզենայինք մի քանի նկատողութիւններ անել ապագայ քաղաքային ինքնավարութեան պարտաւորութիւնների մասին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ԶԵՄԱՐԱՆԻ ԵՓՈՒՆԱՍՏՈՒՆ ԵՒ ՀԻՆԳԱՍԵՐԸ
Հոկտեմբերի 24-ին լրանում է 75 տարի այն օրից, երբ որ հիմնադրվեց Մոսկովի Արևելեան լեզուային Լազարեան ձեմարանը: 75-ամեայ կանոնադր և հաստատուն գործունէութիւնը մի այդպիսի ուսումնարանի մեծ կարևորութիւն ունի հասարակական կրթութեան տեսակէտից, և արժէք մի երկու խօսք սակայն պէտք է հիմնարկութեան մասին:

Լազարեանները պատկանում են Նոր-Ջուղայի (Խաչաւան) ամենապատուաւոր և հարուստ հայ ընտանիքներից մէկին: Գրանց տոհմագիտ Ղազար Լազարեանը Նաղիւ-Շահին յետոյ Պարսկաստանում ծագած աղմուկներից երես քաշելով՝ ապստան գտաւ Ռուսաստան (1749 թ.) իր չորս որդիներով, որոնցից երկուսին վիճակված էր պարսկացի լինելու իրանց ազգայններին: Գրանցից մէկը Յովհաննէսն էր և միւսը—Յովակիմ. առաջինն պատկանում է Լազարեան ձեմարանի հիմնադրութեան գաղափարը, որ նա կտակեց իր եղբոր և երկրորդին՝ այդ վեճած գաղափարը իրադրութեամբ: 1815 թ-ին սկսվեց Լազարեան ձեմարանի գործունէութիւնը շատ համեստ պարագաների մէջ. ուսումնարանը հիմնված էր միայն 30 ձեռնարկով չէաւոր հայ մանուկների համար՝ ընդամենը 4 դասարանով, ինչպէս որ նոյն ժամանակի պետական միջնակարգ դպրոցներն էին: Կարճ միջոցից այդ թիւը սկսեց փոքր աւելանալ: Բաւական թիւով խաչաւանի գիւղերից և երթևեկ աշակերտներով ուրիշ աղբիւրից, որոնց ամենայն հաճութեամբ ընդունում էր ձեմարանը՝ առանց որ

լինէին հիմնական, արմատական, ամենաանհրաժեշտ, անպայման հարկաւոր քաղաքային բարեփոխումները:
Մասնաւորներ մեր ասածները: Իրագործվում է քաղաքային փոխառութիւնը, կառուցվում է շէնք քաղաքային տունը, իսկ 100 հազար բնակիչ ունեցող վերին աստիճանի հակառողջական պայմանների մէջ գրված քաղաքը հետզհետեւ գրկվում է իր բնակիչների առողջութեան համար միակ փրկութիւնից, բուսականութիւնից և այդիները հետզհետեւ ոչնչանալով, քաղաքային ինքնավարութիւնը անհոգ է դառնում եղածները ձեռք բերելու: Իրագործվում է քաղաքային ջրանցքը, իսկ այն հաստատութիւնը, որը անպատշաճ պէտք է ջրանցքից առաջ դուրս բերվէր, այսինքն քաղաքային կանաչիկից առաջ, այդպիսով ամբողջ քաղաքը դրվում է աւելի էլ հակառողջական և վտանգաւոր պայմանների մէջ: Փողոցները խնամքով ջրվում են, իբր թէ բնակիչներին լողից ազատելու համար, իսկ մաքի չափ չեն մաքրվում ջրվերոց առաջ, այդպիսով փողոցներում տարիներով դիպչած է ոչ մի տեղ չը դուրս տանվող աղբն է ջրվում միայն, աւելի էլ մեծ գարշահոտութիւններ և վնասակար մի աղմուկ եւ առաջացնելով ու վարակելով քաղաքի միջնորդը: Պրոէկտներ են մշակվում գաղափար լուսաւորութեան մասին, իսկ առժամանակ փողոցները, մանաւանդ յետ բնիկները բաւականաչափ չեն լուսաւորվում՝ նաւթային լաւաներով: Կառուցված է շէնք քաղաքային տունը, քաղաքը յանձն է առնում թատրոնական շինութիւնն աւարտելու, իսկ քաղաքային հիւանդանոցն ու գիւղական այն աստիճանի տեղ են, որ բազմաթիւ հիւանդներին ընդունել չեն կարող:
Եթէ շարունակենք թելը այդ տեսակ փաստեր, վերջացնելու չենք...

տաղիր, այլ միայն ցանկացողների համար: Երբորը չըջանում—1837—1848 թիւը գիմնադրութեան ծրագիրը սկսում է կրճատվել, կորցնել իր ամբողջութիւնը, իսկ արեւելեան լեզուները կարծողներ են բռնում և միանգամայն պարտադիր բուրդ աշակերտների համար: Այս ծրագիրը դժուարութիւններ էր առաջացնում կրթական գործում չիտրվելով գիմնադրութեան դաւընթացը արեւելեան լեզուների ուսման հետ: Ուստի և 1848 թ-ից ըսկած ձեմարանի ծրագիրը բարեփոխվում է. գիմնադրութեան դասարանները թույլ 6՝ նորից հաստատվում են. իսկ արեւելեան լեզուների համար բացվում է Լիկեոնը երկու մասնադիտական դասարաններով: Այս չորրորդ չըջան տեսից 1848—1870 թիւը, երբ որ Լիկեոնը մի տարու չափ փակվեց, բայց արդէն յաջորդ տարում բացվեց նոր կերպարանքով այն ժամանակակից լուսաւորութեան նախարար կոմս Տոլստոյի ձեռնադրութեամբ: 1871 թ-ից սկսած ձեմարանը մտել է իր հիմնադրութեան շրջանը, որ և տեսում է մինչև այսօր. գիմնադրութեան դասարանները թույլ 8 միանգամայն համապատասխան են պետական միջնակարգ ուսումնարաններին նոյն ծրագրով և իրաւունքով. իսկ Լիկեոնը կազմում է ձեմարանի առանձին արեւելեան բաժինը՝ 3 լսարաններով և եռամսայ դասընթացով. իբրեւ բարձրագոյն դպրոց համալսարանական իրաւունքներով: Այժմ Լիկեոնում կան կաթիլներ և առաջիկայ տուարականներ, հայոց, արաբաց և պարսից լեզուներ ու գրականութեան, տաճկաց (Օսմանի), Ալեքսանդրական և քաղաքային և վրաց լեզուի, Արևելքի պատմութեան և ուսուցող գրականութեան պատմութեան, նոյնպէս ֆրանսերէն լեզու՝ ոչ պարտադիր: Հոգ տանելով ուսումնական մասի վրա՝ Լազարեանները չէին մոռանում և նիւթ ապէս բարւոյն ու ապահովել իրանց սիրած ու գգուած ուսումնարանը առաւանձնուն նուիրաբերութեան ներքով ու նորանոր օգտակար անօրինութիւններ:

Մենք կրկնում ենք, նախ պէտք է հոգալինք անհրաժեշտի մասին և ապա այնպիսի քաղաքային հաստատութիւնների մասին, որոնք հիմնական, ամենաանհրաժեշտ հաստատութիւնների հետեւեւ կարող են համարվել, որոնք երկրորդական զիջել են բռնում քաղաքի առօրեայ գործնական կեանքի մէջ, որոնք համեմատելով առաջինների հետ միմիայն շոյալութեան առարկաներ կարող են համարվել:
Անկասկած ջրանցքը անհրաժեշտ է, բայց ջրանցքը կարող է կանաչիկացիայի, անմաքրութեան խողովակների սխառմի միմիայն հետեւեւ, յաջորդ հիմնարկութիւն համարվել: Անտարակոյս թատրոնը հարկաւոր է, սակայն համեմատելով լաւ կազմակերպված, ընդարձակ և բոլոր պահանջներին բաւականութիւն տուող քաղաքային հիւանդանոցի և գիւղական հետ միմիայն շոյալութեան առարկայ կարող է համարվել: Շատ լաւ է ահագին փողեր ծախել շէնք քաղաքային տան կառուցման վրա, սակայն դա շոյալութիւն է համեմատելով բնակիչների համար շուրջ քաղաքային անհրաժեշտութեան հետ, որը անպայման կապված է քաղաքային այդիների, բազմաթիւ սկոէրների, բուսականութեան գոյութեան հետ, և այն և այն:
Մեր կարծիքով մեր ապագայ քաղաքային դռնային պէտք է իր համար նպատակ չեն ուղղել նախկին դռնային արած սրկալները: Նա պէտք է աչքի առջև ունենալով վերև յիշված իրողութիւնները, հոգայ այսուհետեւ ամենաանհրաժեշտ, անյետաձգելի, մարդկային կեանքի համար անպայման հարկաւոր քաղաքային բարեփոխումներ իրականացնելու և ջանայ իրագործել այն, ինչ որ վաղուց արդէն պէտք է դուրս բերված լինէր:
Բազմամարդ քաղաքի համար՝ սանիտարական օրինակելի դրութիւնը, բնակիչների

առողջութեան մասին հոգատարութիւնը կեանքի համար անհրաժեշտ պայմանները գոյութիւնը՝ աւելի են հարկաւոր և աւելի շուտ պէտք է իրաւործվէին, քան այն հաստատութիւններն ու հիմնարկութիւնները, որոնք առաջիններէն հետ համեմատելով միմիայն շուայլութեան առարկաներ կարող են համարվել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊՆԵՐ

Կրկնում ենք մեր խնդրքը «Մշակի» խմբագրութեան հետ ոչինչ կապ չունեցող անձանց՝ չուղարկել մեր խմբագրութեան անունով որ և է նախ և ետ կամ հեռագրի ընդ: Մենք ժամանակ չունենք ընդունել մեր խմբագրատանը ուղիւների անունով ստացուող նամակներ և հեռագրներ: Իսկ եթէ կողմնակի և խմբագրութեան հետ ոչինչ կապ չունեցող անձանք այսու ամենայն կը շարունակեն ուղարկել մեր խմբագրութեան անունով այլ և այլ նամակներ և հեռագրներ իրանց ծանոթներին թիֆլիսում հասցնելու համար, այդ տեսակ նամակներն ու հեռագրները մենք այսուհետեւ այլ ևս չենք ընդունի խմբագրատանը և անմիջապէս յետ կը դարձնենք ուղարկողներին: Կրկնում ենք. նամակներ կամ հեռագրներ կարելի է ուղարկել ըստ ԵՊՈՍՏՈՐԱՅԻՆ պատահաւոր կամ հեռագրատանը:

Գլխիջանից, պ. վահան Մատինեանից ստացանք 1 բուրլի յօդուտ Լիզա Սոփիանի: Ընդամենն ունենք այդ նպատակով 56 բուրլի:

Մեզ գրում են Գլխիջանից հոկտեմբերի 23-ից հետեւեալը: «Գլխիջանից ոչ հեռու գտնուող Մամադ-Քեօրիի ասված անտառը ահա 3 օր է, որ այրվում է. այսօր միայն գիւղերից մարդիկ են ուղարկվել հրդեհը հանգցնելու համար»:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան անդամները հրաւիրում են ներկայ լինելու հերթական ժողովին, որը պիտի կայանայ չարաթ օր, հոկտեմբերի 27-ին, երեկոյան 7 1/2 ժամին: Հերթական հարցերը վերջացնելուց յետոյ, պիտի լինի հետեւալ գիւղացուներ. «Շերամապատեան ընկերութեան»:

Հաղար բուրլի: Այս գումարներից զատ՝ նոյն Լազարեանները իրանց աղքատ խաչատուր Գիւղատնտեսական ընկերութեան նուիրում են 12 հաղար բուրլի՝ 2 սանի համար. նոյնպէս հանգուցեալ Ալեքսանդր Բ. Կայսեր՝ ճեմարանի այցելութեան յիշատակին 14,000 ր. դարձեալ 2 ձիաւարժ սանի համար: Վերջապէս խաչատուր Լազարեանի ամուսին տիկին Կատարինէ Լազարեան կտակել էր ճեմարանին 40 հաղար բուրլ՝ 5 սանի համար: Այսպէս միայն Լազարեան տոհմի զանազան ղեկավար և զանազան պիտոյնների համար ճեմարանի մատուցած նուիրատուութիւնները հասնում են 800 հաղար բուրլու. իսկ նրանց հաշուով ուսանող սաների թիւը 60-ի չափ է իւրաքանչիւր տարի: Դրանց մէջ չեն 20 թուով երեկոցական կուլված սաները:

Լազարեան ճեմարանը իր առաջին օրերից անխտիր կերպով ընդունելով այլ և այլ ծագման և կրօնի մանուկներին, այսու հանդերձ նա երբեք դադարած չէ բուն հայոց ուսումնարան լինելուց: Ուսումնական առարկաների մէջ՝ հայոց լեզուն և կրօնը միշտ առաջնակարգ են նկատված եղել. իսկ չնորհիւ հմուտ և գիտուն ուսուցիչների և դաստիարակների այդ առարկաների աւանդութիւնը մեծ առաջադիմութիւն է արել: Այս կողմանէ ճեմարանի նախկին գործիչներից յիշելու է մանաւանդ՝ Ալամդարեանին, Սալամեանին, Մ. Էմինին, որ 40 տարու չափ ուսուցչի և պրոֆէսորի պաշտօն կատարելով՝ հանդերձ՝ երկար ժամանակ տեսուչ ևս եղած է ճեմարանում, Ստ. Նազարեանից և Մ. Մանգեանից, որոնք իրանց գրականական վաստակներից զատ, նոյնպէս ծառայութիւններ են մատուցել ճեմարանի կրթական գործին:

Հայ հասարակութիւնը չէր կարող չը նկատել այն ուղղութիւնը, որ տիրում էր Լազարեան ճեմարանում, և չը համակրել այն գաղափարներին, որոնց իրագործել էր ձգտում այդ հիմնարկութիւնը: Եւ ճեմարանի տարեգրութեան մէջ պահ-

ղրութիւնը կովկասում: Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք:

Լուսն ենք, որ թիֆլիսի երկրորդ գիմնազիայի չիմուքիւնը շատ անցարժան լինելով, գիմնազիայի նոր գիմնազիայի պ. Կրեզովալ միտք է յղացել գիմնազիայի համար սեփական տուն կառուցանելու: Այն շինութիւնը, որի մէջ գետնաշէն է այժմ յիշեալ գիմնազիան, պատկառում է մասնաւոր մարդուն, և գիմնազիական վարչութիւնը վարձում է միայն այդ տունը: Ասում են, որ միայն երկու տարի է մնացել մինչև վարձի պայմանաժամի լրանալը:

Արտասահմանի հայոց մի լրագրի թղթակիցը կովկասում իր արած ճանապարհորդութեան մէջ հետեւում համեմատութիւնն է անում ուսանալիքի և թիւրքահայերի մասին. «Թիֆլիս է նաև կեղծում Ռուսահայերի մտաւորական ուժերին և կամ իրանց բառով ինտելիգենտ դասին: Թիֆլիսի հայ լրագրութիւնը աւելի զարգացած է ինքնին մէջ է քան Կ. Պոլսի: Եւ անկէ կը տարբերի նաև իր ուղղութիւնով: Կ. Պոլսի թերթերը զբաղած են գլխաւորապէս Կ. Պոլսի տեղական հարցերով և կամ եւրոպական թարգմանութիւններով. իսկ այստեղ թիֆլիսի ինտելիգենտ դասը աշխատած է նաև գաւառներն ալ ուսումնասիրել: Այս մասին չէ կարելի չը յիշել մասնաւորապէս Մշակի լրագրի գործունէութիւնը որ իսկապէս եղաւ Ռուսահայերի ներկայ զարգացման խթանը և ուղղութիւնը. Ռուսահայերին մէջ համալսարանական կրթութիւնն ունեցողները բաւական մեծ թիւ մը կը կազմեն և օր ըստ օրէ կ'աւելնան. եթէ թիւրքահայերին մէջ աւելի փափաղ կայ բարձրագոյն ուսման այն ճիւղերին միայն հետեւի, որոնք ապահով հայ կրնան աւելի ինչպէս են բժշկութիւն, փաստաբանութիւն և այլն, այստեղ Ռուսահայերը ունին մասնագէտներ նաև ուրիշ շատ ճիւղերի մէջ, օրինակ մանկավարժութիւն, ընկերական գիտութիւններ, աստուածաբանութիւն և այլն: Սակայն ի նպատակ թիւրքահայերի կարելի է ասել որ այստեղ ուսեալ դասը առանձին կարող մը չը կազմուր և աւելի զիւրաւանջելի է հասարակ ժողովրդին, անոր մէջ կապի է որովհետեւ իր ուսման աստիճանն ալ միջակ է, շատ խորութիւն չը մնար իր և ժողովրդի մնացած մասին մէջ, հետեւեալէս աւելի զիւրաւանջելու կրնան խառնուել ու խառնուել միմիկն: Այսուհետեւ տեղաւ միւսմամբութեան և բարձր զարգացում ունեցող փոքրամասն-

պանված են բաղմամբ և ապացոյցներ՝ իր և հասարակութեան մէջ եղած բարոյական կապերի: Եթէ հայ հասարակութեան անդամներին միջանաք մէջ ցանկութիւն էր ծագում հետեւելով Լազարեանների ազնիւ օրինակին, մասն հանել իրանց նիւթական միջոցներից իրանց համազգայինների մտաւոր պահանջը լրացնելու, նրանք զիմեւ էին այդ զոհաբերութիւններով Լազարեան ճեմարանի իրեն բարձրագոյն ուսումնական կենտրոն հայազգի մանուկների համար: Սկսած 1840 թիւից մինչև մեր օրերը չէ դադարում այդ կամաւոր նուիրատուութիւնների շարքը, որոնց մէջ բացի բաղմամբ հայերից՝ կան և ուսմանը. Գապարեան, Մարգարեան, Իլի. Արդուեան, Երկաշաքազուկ, Թամաշեան, Հայրապետեան, Ամիրեան, Լիւրիսեան, Գալը. Քանանեան, Տեր-Յակոբեան (գործիք) զանազան ժամանակ տասնեակ հաղարներ են կտակել ճեմարանին, որոնց արդիւնքով՝ նուիրատուների իւրաքանչիւրի յիշատակին միշտ մէկ կամ երկու սան ուսանում են, իսկ բոլորին միասին՝ աւելի քան 15 հոգի: Բացի սրանցից՝ հանգուցեալ Ալեքսանդր Բ. Կայսերի վտանգից աղատվելու առթիւ Մոսկվայի հայ հասարակութիւնը հանգանակութեամբ 6 հաղար բուրլ է հաւաքել, որի տոկոսով մի սան է ուսանում ճեմարանում: Այսուհետև յիշելու է Թադաւոր Կայսերի անունն 4 թիւակը, Կովկասեան և Անդրկովկասեան կոչված 15 թիւակը կովկասցի մանուկների համար. ևս և Մաթիլդին, Գալեպուկ և Կուրկիլի գէմաուլի Սկրելովի յիշատակին սահմանած թոշակները: Բոլոր ձրիւնքով սաների թիւը այժմ անցնում է հարիւրից. դրան կենցիկ աւելին՝ ինչպէս տեսանք, Լազարեան տոհմն է սահմանել *):

*) Յիշելով այն վտանգութեան մասին, որ ի վերջոյ հետէ ունի հայ հասարակութիւնը դէպի Լազարեան ճեմարանը, աւելորդ չէր լինի նշանակել այստեղ մասնաւոր վերջին տարիներում կը տակաւ կրկու գումարները, որոնք տարբեր նպա-

նութեան մէջ միջին դաս մը չը գտնուիր, ուրեմն աւելի դժուարութիւն կայ երկու տարբեր իրար մօտեցունելու: Իրողութիւնն այս է որ մի համալսարանական անձ երբ թիֆլիսէն ելնելով դաւաճները դիմէ, ինքզինք այնտեղ խեղդող միջոցով մէջ կը գտնէ և փոխանակ ինք բարձրագոյն ուսուցանելու հասկացողութիւնը, ժողովուրդը զայն իր մէջ կը ձուլէ և կը թմբեցունէ: Բնաւորութեան կողմէն, Ռուսահայը աւելի զիւրազրդու և յաւակնուտ է քան թէ թիւրքահայը, նոյնպէս կառելի է ասել որ Ռուսահայը անկեղծ և միամիտ է, իսկ թիւրքահայը աւելի թեքուող և չբնականաց, բնաւորութեան տարբերութիւններ որոնք առաջ եկած են չբնականաց տարբեր հանգամանքներից:

Յինանների միևնույնութեան ըննութեան ներկայացրած է մի նախադիմ, որով առաջարկվում է երկրագործների մէջ հիմնել կարկուտի դէմ ապահովող փոխադարձ ընկերութիւն:

Կ. Պոլսից մեզ գրում են, որ Խորեն Դարբէյ եպիսկոպոսը արդէն հասել է թիւրքաց մայրաքաղաքը:

«Новое Время» լրագրում կարդում ենք. «Կայսերական պալատի մինիստր, կոմս Վորոնցով-Դաշկովը տանը բացված է ձրի սեղանատուրն աղքատների համար, որտեղ խորաբանչիւր օր ճաշում են եօթնասունից մինչև հարիւր աղքատ մարդիկ»:

Եւրոպական մի քանի լրագիրներ հաղորդում են, որ Վանի մի քանի նշանաւոր հայ հարուստներ և երկու էլ հողերաւորներ ստացան թիւրքաց կառավարութիւնից քանչաններ:

Ստացանք «Թովալ» անունով մի գրքուկ, աշխատութիւն պ. Վ. Փափաղեանի: Գրքուկի բովանդակութիւնը վերցրած է թիւրքաց դատաւանական կեանքից, և նպատակ ունի ցոյց տալ, թէ ինչպէս զանազան սղէտ և ինքնակուլ փաստաբանները խաբում են միամիտ ժողովրդին և հարստահարում նրան: Գրքուկը սուղագրված է «Արօր» սուլարանում, բաւական վայելուչ կերպով:

Պատկաստանի Սալամատ գաւառից մեզ գրում են, որ այնտեղ գտնվել է մի հանք, որը սապօնի յատկութիւն ունի և որից արդէն ժողովուրդը սկսել է օգտվել գործածելով սապօնի փոխա-

Ամիոնիւմ նուիրատուութիւնների խնդրք՝ դիտելու է, որ սկսվելով 200 հաղարով՝ Լազարեան ճեմարանը այժմ ունի իր արամադրութեան ներքոյ մօտ 900 հաղար ր. մայր գումար, որի արդիւնքով և կառավարվում է ամենայն ապահովութեամբ:

Ձրիւնքով աշակերտների մասին խօսելիս, պէտք է յիշել ճեմարանի աշակերտների ընդհանուր քանակութիւնը: Արդէն վերը տեսանք, որ ճեմարանի բացման առաջին տարին 30 աշակերտ էր միայն. այնուհետև շարունակ աւելանալով 50 տարեկան միջոցում՝ արդէն 160-ի է հասնում այդ թիւը 1865 թիւին: Երբորը քանուհիներգամակին, այն է 1865 թիւից մինչև ներկայ 1890 թիւակներ այդ թիւը (160) արագութեամբ բարձրանում է, մինչև իսկ կրկնապատկելու մօտենում: Այժմ մօտ 300 աշակերտներ ունի Լազարեան ճեմարանը. դրանցից 2/3 գիւղերովիկ է և մնացածը՝ երթնակի: Աշակերտների այս քանակութիւնը ծայրագոյն թիւն է, որ կարող է տեղաւորել իր մէջ ճեմարանի շինութիւնը: Տեղի պակասութեան պատճառով է մասնաւոր, որ ներկայ վերադասուց պ. Գ. Քանանեանց՝ հոգաւոր աշակերտների զբօսնելու և մարմնամարզական պարապմունքների համար յարմար և արձակ սրահ ունենալու, ձեռք դարկեց այս տարի մի ընդարձակ ու հոյակապ դահլիճ շինելու, որ հարկաւոր աշակերտներ աղատ կերպով կարող են չըլլել և խաղալ, նաև զննութեան մարզեր յօրինել: Ճեմարանի աշակերտ-

տակներն են յատկացրած: Դրանցից մէկը հանգուցեալ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանից 25 հաղար բուրլով (այժմ 40 հաղարից աւելի) յայտնի կտակը, որ պիտի կատարվի ևս օրինակի հարկը աւարտել յետոյ, երբ որ մի քանի միլիոնի հասնի այդ գումարը: Երկրորդը Ղըրթարեցի Դանիէլ Գաբրիէլեան Քանանեանցի հաստատած մի քանակ է հայոց լեզուի, պատմութեան և գրականութեան վերաբերեալ գրուած ների համար, որոնք նիւթը նշանակելու և նոյն իսկ միջանակաբաշխութեան անօրինութիւնը յանձնված է Լազարեան իկեմնին:

Ընն: Յանկալի է, որ այդ մասին մեզ հաղորդեն աւելի մանրամասն տեղեկութիւններ:

Կ. Պոլսի հայոց լրագիրներում կարդում ենք. «Կատական և կրօնական գործոց նախարարութեան կողմէ երկրորդ պաշտօնագիր մը ևս եկած է ի պատրիարքարան ի մասին գրեթէ խնդրոյն Պաշտօնագիրը կըսէ թէ եկեղեցական գրքերը ըստ առաջինից գրեթէ պիտի մնան օր և է քան թէնէ և արդեւ, իսկ նոր սպաղարուած ուղի տեսակ գրքեր միայն ըննութեան պիտի ենթարկվին»:

Հոկտեմբերի 30-ին թիֆլիսի դատաստանական պալատում պիտի ըննվի քահանայ Օրբելեանցի և միւսների գործը, որոնք մեղադրվում են կեղծ փող շինելու համար:

ԲԱՅՈՒՄՅՈՒՄ մեզ գրում են հոկտեմբերի 24-ից «Անցեալ շաբաթ վախճանից Պետրոս Թուխան. Զարահանց. յուղարկաւորութեան հանդէսը մի բազմութեան ներկայութեամբ կատարվեց կլրակի օր, ամսիս 21-ին: Հանդուցեալ ընդի տեղաւորական կերտցի էր: Նրա հայրը՝ Կարապետ Թուխան. Զարահան քաղաքային և զինուորական հիւանդանոցների թիւիկ է եղած: Ինքը Պետրոս Զարահան մնալ է 1853 թիւին. երկուստեք հասկում, 6 տարեկան ընթացքում, ձրիւնք կատարել է Տիգրանակերտի թեմի աղգային վարժարանների տեսչի պաշտօնը, որի համար և օրհնութեան կօն դակի է արժանացել հանդուցեալ երջանկայլշատակ Ներսէս պատրիարքից: Այնուհետև հանդուցեալ մի առ ժամանակ ծառայել է օսմանսան կայսերական հեռագրատանը, բայց զանազան հանգամանքների չնորով, օրհնելով մի առաւ տարի առաջ թողել է իր մայրենի աշխարհը և Կովկասի մէջ ապաստան գտել իր համար: Այստեղ, Բաթումում, նա, ծառայելով հեռագրատանը, յայտնի էր իր տոկուն գործունէութեամբ և վայելում էր իր ընկերակիցների յարգանքը: Նա առաւ ևս յայտնի էր Տաճկահայաստանից եկող հապանդուխտներին, որոնց օգնելու համար նա պատրաստ էր միշտ թէ խորհրդով և թէ գործով: Հանգուցեալ թողել է իրանց յետոյ իր թշուաւ մօրը, հիւանդ կնոջը և երեք զաւակներին յետի չքաւորութեան մէջ և անպաշտպան: Յուղարկաւորութեան ծախսը և գերդաստանի կարիքը հոգալու համար պօստ-հեռագրատան կայարանապետը լիմեց տեղիս հայ հասարակութեանը մի գրու-

ների թիւին կցելու է և ուսումնաւարանների թիւը 75 տարեկան ընթացքում աւարտել են իրանց ուսումը չուրջ 1500 հոգի, որոնց ահալին մեծաւ մասնութիւնը անշուշտ հայեր են և ոչ միայն Ռուսաստանից, այլ և Պարսկաստանի, Տաճկաստանի և Հնդկաստանի սահմաններից: Դրանցից առաջակ են զանազան ժամանակ յայտնի հայ գիտնականներ, մատենագիրներ, եկեղեցականներ, պետական բաղմամբի պաշտօնականներ, հասարակական գործիչներ, նոյն իսկ այժմ հայոց կրթական ասպարէզը գործողներ ինքնին մեծագոյն մասը Լազարեան ճեմարանում է ստացել իր կրթութիւնը: Թաթումում և Կարսում աշակերտներից ևս դուրս են եկել զանազան ժամանակ բաղմամբի հասարակական գործիչներ, պետական պաշտօնականներ՝ մասնաւոր զիւրմատական ասպարիզում:

Ընդհանուր հայեացք գցելով Լազարեան ճեմարանի 75-ամեայ չըլլանի պատմութեան վրայ մենք տեսնում ենք, որ անթիւ են Լազարեան տոհմի մատուցած ծառայութիւնները, նա կարող զգաւ ոչ միայն հիմնել յօդուտ հայ հասարակութեան այս ընդարձակ կրթական հաստատութիւնը, այլ և ամեն միջոց գործ դրեց նաև բարդաւաճելու, պահպանելու և ապահովելու նրա գործը թիւնը երկար տարիներ ընթացքում: Արդէն նրա 75-ամեայ տարեկարծը գրական կարող է լինել աւելի երկարաձիգ, դաւաճուր ցոյցութեան:

1865 թիւին Լազարեան ճեմարանը կատարեց իր 50-ամեայ յօրեկանը չըլլա հանգիստով տարեգրութեամբ հրատարակելով իր կիսադարեան գլխաւոր ճեմարանի ընդարձակ պատմութիւնը նոյն ժամանակի տեսուչ՝ իսկ այժմ վերադասուց պ. Գ. Քանանեանցի աշխատակրթութեամբ կազմած: Առաջիկայ 24-ին հոկտեմբերի ճեմարանը տնտեսութեան ինքնագրութեան 75-օրը տարեգարծը: Նախկին սաներից մէկը

Լըյս տեսաւ.

"Ք Օ Փ Ա Լ"

Պատկեր թիւերաձայնի կեանքից, զրեց Վ. Փափաղեան: Գինն է 5 կոպէկ: Վաճառվում է միայն "Աղբիւրի" խմբագրութեան գրասենեակում:

1—5

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԻ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ՀԵՏԵՆԵԱԼ ԳԱՍԱ-ԳՐԻԵՐԸ

"Начальная книжка для обучения русскому языку, годъ 1, 2, 3" издание 2-е, сост. Н. Я. Теръ-Аноповъ. Գինն 45 կոպ.

Այս երկրորդ տպագրութիւնը Սուրբ Էջմիածնի մանածոնոցը քննեց և առաջարկեց ընդունել հայոց ծխական ուսումնարաններում որպէս յարմարագոյն դասագիրք ուսնաց լեզուի I, II և III տարիայ համար:

"Учебникъ русскаго языка для армянскихъ училищъ, годъ 4 и 5" издание 8-е, сост. Н. Я. Теръ-Аноповъ. Գինն 60 կոպ.

"Русское Слово, руководство для армянскихъ училищъ, годъ 1 и 2" издание 9-е, сост. К. Теръ-Давтянцъ. Գինն 50 կոպ.

Վերջինիս գրքերը հաւանած և առաջարկված են լուսաւորութեան նախարարութիւնից և Սուրբ Էջմիածնի մանածոնոցից որպէս դասագիրք հայոց ծխական ուսումնարաններին համար:

Նոյն գրաւաճառանոցի հրատարակութեամբ լըյս տեսած են և հետեւեալ դասագրքերը.

"Русскій Писатели въ выборѣ и обработкѣ для школъ" т. II сост. В. А. Мартиновскій, издание 2-е. Բնա 1 руб. 25 коп.

"Собрание примѣровъ для письменнаго исчисленія вып. I вычисленія надъ числами отъ 1 до 100" сост. С. Н. Захаровъ. издание 9-е Բնա 20 Կ.

(2.) 1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. RAQUET ET COM. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգեմուտերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՅ ՀԵՎԻ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 4/16 տարիւնց սկսած

ԵՒ ՓՈՒԱԳԱՐԶ

Բաթունից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս:

ԲԱԹՈՒՄԻՅ ՇՈԳԵՆԱԻՐԸ ԳՈՐԾՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Հինգշաբթի, 11/23 հոկտեմբերի շոգեմուտ ՄԱՐՍԷԼ — ԲՈՇԷԼ

— 25 հոկտեմբերի (6 նոյեմբերի) — ՄԻՆԳՐԷԼԻԱ — ԺԻԲՈՒԷՆ

— 8/20 նոյեմբերի — ԱՆՍՈՒԼԻԱ — ԳԱՐԻԻԿ

— 22 նոյեմբերի (4 դեկտեմբերի) — ՄԱՐՍԷԼ — ԲՈՇԷԼ

Տօմարից ուղղակի երթևեկութեան Բաթունից ՀԵՎԻ Պարիզ իրական գնաց պակսեցրվում է:

Տեղեկութիւնները համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն զիմե ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄԻՍ Կ. Գարսնիսին, Նաբերէժնայա, իսկ ՔԻՖԼԻՍԻՍԻՍ Կ. Վիկտոր ԴԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, նախկին զինեղալ Տէր-Աստուածաբոյի տանը:

9—10 (Կ. Ե. 2.)

ԿԻՆ-ԲՈՒՇԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Վանքի Մեծ փողոցի և Մուխրանի փողոցի անկիւն, տուն Ջանշինկի:

3—5

ВЫСОЧАЙШЕ
ТОВАРИ-
МЕХАНИЧЕСКАГО И ЧУ-



УТВЕРЖДЕННОЕ
ЩЕСТВО
ГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовокъ, вальцовыхъ поставокъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверио. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабелъ «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножѣзныхъ дорогъ.

Складъ локомотивовъ, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клитонъ и Шултвортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ
Г. ДАВЕРИО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реального училища кв. № 8.

35—100 (Կ. 2.)



ՄԻՋՈՑ ԽԱՐԻՈՒՄԻ ԴԵՄ

ԲՃՀԿԱՆ ԳԷՎԱՐՈՒՄՆԱԿԵ ԹՅՈՒՄԱՐԿԱԾ

ՕԼՖԱԿՏՈՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻՈՒ

Ճախվում է 40 կոպէկով

Գեղազորական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան Մէջ Թիֆլիսում:

30—52 (Ծ.)

Գլխաւոր պա-

հետը գտն-

վում է Թիֆլի-

սում և Բաղ-

ւում Բարձրա-

գոյն հաստա-



վաճ գեղատա-

ապրանքների

վաճառման Կով-

կասեան ընկ-

րութեան մոտ:

11—50 (2.)

Լըյս տեսաւ.

ՇԻՐՎԱՆ ԳԱԴԷԻ
ՉՈՒՐ ՅՈՅՍԵՐ

ՎԵՂԻ:

Գինն է Թիֆլիսում 1 լուրի: Օտարաբարացիներին ճանապարհածախսով 1 ր. 25 Կ. Վաճառվում է Կենտրոնական գրաւաճառանոցում և հեղինակի մօտ՝ Կիֆիլի Միրանաճ:

4—5

ՄԻ ԸՆՏԱՆԻՐ ընդունում է զիշխիկ աշակերտներ մտաչելի գներով: Աշակերտների հետ կրկնութիւններ կանեն: Նոյն տեղը կարելի է քրանտերէնի և գերմաներէնի դասեր վերցնել: Հասցէն. Авчалская площадь, домъ Исарлова, квартира Луневича.

10—10

Լըյս տեսաւ.

Գ Ի Ի Լ Է

աշխատութիւն Թ. Ղադարեանի: Գինն է 15 կոպէկ: Գիմել "Աղբիւրի" խմբագրատուն:

2—3

այլվաճ է բաժանորդագրութիւն և ստորագրութեան համար պատրաստ է Կ. Տէր-Աստուածաբանի:

Ն Ի Մ Յ Ա

Վերնագրով բանաստեղծութիւնների ժողովածուն մի մեծ հատորի մէջ ամփոփված: Կանխադէս բաժանորդ գրովորների համար 50 կոպէկ, ապակեայ յետոյ գինը կաւեւանայ: Ցանկացողները կարող են զիմե հետեւեալ հասցէով՝ Կիֆիլի, на Дворцовой улицѣ, Гавриилу Исаевичу Саламбекову.

Հրատարակել է Հայկանուշ Տէր-Աստուածաբան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Իմ հաւատարմատար գանձակեցի Մ. Օհանեանից ստացայ տեղեկութիւն, որով նա յայտնում է, թէ արդէն երկու շաբաթ է գանձակում ունեցած իմ ընթերցարանայ անկարգ պահպանելու պատճառով, փակած է: Ցաւելով այդ մասին, և հրապարակով ներողութիւն խնդրելով ընթերցարանիս մշտական և անփոփոխ անդամներից խնդրում եմ ներողութիւն յայտնել նշանակել մէկին կառավարելու ընթերցարանը որի զոյգութեան պատիւը իրանց է պատկանում և ոչ միայն ինձ: Հակառակ դէպքում թող ներողամիտ լինեն մինչև իմ վերադարձս:

Մեծ-Ղարաբլիկոս

Լուսանկար սարկաւադ Թ. Տէր-Դանիէլեանց

2—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍՍԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՈՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ Մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 2/14 նոյեմբերի ղուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՅ GUADALQUIVIR (ԳԱԼԿՎԻԼԻՐ) շոգեմուտ, նուապետ BERNARD (ԲԵՐՆԱՐԴ) ՀԵՎԻ Կ. ՊՈԼԻՍ, Մարտի, Հալի, Լժնոն, մանկով և միջանկեալ նուահանգստանքը:

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄԻՍ Կ. Գ. ԷՍՍԷՆԺԵՐ, ԹԻՖԼԻՍԻՍՄ՝ ԳԵՈՐԳ. ՀԵՋՈՒԹԵԱՆ ՀԵՋՈՒԹԵԱՆՑ, իսկ ԲԱԹՈՒՄԻ Մէջ՝ ԳՈԼԴԼՈՒՍԻ:

2—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԻԵՆԻ

(Կովկաս, Վորոնեյի արձանի հանդէպ)

Հիւանդների ընդունում են առանց օր

Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

ՆԱԽԱՍԱՐԻԵՆԻ—9—11 Ժ. Վիրաւոժութեան (և առանցապի) սիֆիլիսի և աչքացալի

ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 Ժ. Ներքին, երեխայոց և կանանց ց.

ԿԻՆ-ԲՈՒՇԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ—11½—12 Ժ. կանանց և երեխայոց ց.

ԿԻՆ-ԲՈՒՇԿ ՄՈՒԿԱՐԻՆՍԿԻ—12—12½ Ժ., կանանց և ներքին ց.

ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—12—1 Ժ. ականջի, կոկորդի և թիւ ց.

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12½—1 Ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

ԳԱԴՐՈՍԿԻ—5—6½ Ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաւոժութեան.

ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 Ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա):

ՆԱԽԱՍԱՐԻԵՆԻ—6—7 Ժ.

Վճար—50 Կ. Համախորհրդի (Կոնսիլիումի) համար առանձին:

Հերթակալ բժիշկ—Երեկ. Ժ. 9-ից մինչև առ. Ժ. 7-ը:

Հիւանդանոցի վերատեսուէ բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԻԵՆԻ